աղետալից գթոյ մերոյ զոր ունիմք առ ձեզ, հանապազ հոգ մեր դուք էք ի Տէր, եթէ որպէս կամ զիարդ էք ի ժամանակիս չար բերմանց ներքուստ և յարտաքուստ ներհակաց։ Զոր և մոխրամած դիմաք և սրտահառաչ արտասվաք խնդրեմք յԱստուծոյ, հանդերձ միաբան եղբայրութեամբս. միշնորդ ունելով ի մաղթանս մեր՝ զամենօրհնեալ սուրբ զԱստուածածինն և զՍուրբ Գրիգոր Լուսաւորիչն և զամենայն Սուրբս Աստուծոյ. զի իւր արարչական խնամովն և եռանդնաշարժ սիրովն գթասցի ի վերայ ձեր. ամէն։ Եւ զամենայն պատահմունք տարերաց և տարադէպ փորձութիւնք սատանայի՝ որ գան ի վերայ աշխարհի՝ վասն ծովացեալ մեղաց մերոց, բարձցէ ի ձէնջ և յամենայն սահմանաց ձերոց. ամէն։ Եւ լցուսցէ զձեզ ամենայն բարութեամբ հոգոյ և մարմնոյ, տամբ և տեղօք, զարմաք և զաւակաք, որդովք և դստերաք, սիրելաւք և բարեկամաւք, այգաք և բուրաստանաք և ամենայն գոյիւք. ամէն. Այլ և ժողովրդապետն ամենեցուն Յիսուս Քրիստոս՝ օրհնեսցէ զբոլոր ժողովուրդդ. զքահանայդ ընդ սուրբ քահանայիցն Մելքիսեթեկի և Ահարոնի օրհնեսցէ. զմեծատունդ՝ ընդ մեծատանցն ողորմածաց ընդ Աբրահամու և ընդ Յոբայ համբերողին. զտանուտէրդ՝ ընդ տանուտերանցն բարեպաշտից. զաղքատդ՝ ընդ կամաւոր աղքատին Ղազարու. զծերդ՝ ընդ ծերոյն Սիմէոնի, զերիտասարդդ՝ ընդ Սահակայ և Յովսեփայ. զմանկունս ձեր՝ ընդ Երից մանկանցն. զտղայս ձեր՝ ընդ տղայիցն մատուցելոց առ Քրիստոս. զճանապարհորդս ձեր՝ ընդ Մարխասայ և Կոստիրայ՝ շահավաճառ և արդիւնաւոր արասցէ. ամէն։ Զարվեստաւորս ձեր ընդ Բեսելիելի հանճարեղս արասցէ. ամէն։ Զհողագործսդ՝ ընդ ճշմարիտ և քրտնաջան աշխատողացն պսակեսցէ. ամէն։ Զկանայս ձեր ընդ իւղաբերից կանանցն օրհնեսցէ. և ամենայն որպիսութեամբ բարեաց զտունս և ըզշտեմարանս ձեր լցուսցէ. ամէն։ Այլ և հայցեմք յամենասուրբ Երրորդութենէն, զի պատճառն բոլորից՝ ահեղն Աստուած Հայր երկնաւոր հաշտեսցի ընդ ձեզ. Ծագումն ի Հօրէ անճառ ծննդեամբ Որդին Միածին ծագեսցէ ի ձեզ զլոյս անճառ շնորհաց իւրոց. Հոգին Աստուած ահեղութեամբ շրջի ի վերայ ձեր, և բաշխէ զպարգևս անապական փառաց իւրոց. ամէն։ Եւ տացէ ձեզ չինութիւն, անդորրութիւն, խաղաղութիւն, հիւանդաց առողջութիւն, գերելոց ազատութիւն, մեղաւորաց թողութիւն, անզղջիցն դարձ և ապաշխարութիւն, սգաւորաց մխիթարութիւն. անդաստանաց ձերոց պտղաբերութիւն. բուսոց և տնկոց աճողութիւն. անասնոց ձերոց անսխալ ծննդակալութիւն և ամենայն կենդանեաց առողջութիւն. ննջեցելոց ձերոց հանգիստ և արքայութիւն պարգևեսցէ Քրիստոս Աստուածն մեր. ամէն։ Այլ և բարեխօսութեամբ Սուրբ Աստուածածնին և Ս. Կարապետին և Ս. Լուսաւորչին, բացցէ Տէր Աստուած զդուռն հրաշից անճառ ողորմութեան իւրոյ ի վերայ ձեր. իբրև զցաւղս գարնանային, և իբրև զճառագայթս արեգականն, զկանուխն և զանագանն, ի տվէ և ի գիշերի, ի նստել ի տան և գնալ ի ճանապարհ, ի ննջել և ի յառնել, յուտել և ի յըմպել, յասել և ի լռել, գնել և ի ծախել, չինել և ի տնկել, գործել և ի հանգչել,(ի) կեանք և ի մահ